

տակ ունենալով Ս. Աթուոյս պայծառ
ուսմանը և Աղգին յառաջադիմու-
թիւնը :

«Նա և յատկապէս կը խնդրեմ՝
Ընդհանուր ժողովէն, որ մեր անցեալ
թերութեանց չը նայելով, որք ՚ի հար-
կէ անփորձութեան արդիւնք են, իւր
աջակցութեամբ ինչպէս յառաջ նայն-
պէս այսուհետեւ ՚ի մի սիրա և ՚ի մի
հոգի կը գործէ յօգուտ ընդհանուր
Աղգին ու :

Ս. Աթուոյն Երուսաղէմի
ՊԱՏՐԱՐԻ
ԵՍԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԻՆՉ ՊԵՏԻ ԼԻՆԷՐ ԸՆԿԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՎԻՃԱԿԸ . ԵՅԷ ԲՐԻՍՏՈՆԷՆՈՒԹԻՒՆԸ ԶԵ
ՐԵՒԷՐ ԲՆԱԻ ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐԱՑ

Ըստ կարի պիտի ջանամք լաւ բա-
ցայայտել թէ ի՞նչ վիճակ պիտի ու-
նենայինք մենք այսօր, եթէ քրիստո-
նէութիւնը չերեւէր աշխարհի վերայ,
որով պիտի ուսանիմք ըստ արժանւոյն
յարգել մեր առ սոյն աստուածային
կրօնն ունեցած պարտաւորութիւնը :

Օգոստոս կայրն մեզք և անօ-
րէնութեամբ հասաւ կայսերական
իշխանութեան, եւ կառավարեց զի-
մակաւ առաքինութեան . նա բռն-
նակալն մը յաջորդած լինելով՝ կամե-
ցաւ վնքն անկէ տարբերելու համար
հանգիստ թողուլ իւր հպատակե-
րն. եթէ չէր կարող լինել մեծանձն որ,
կը փափարէր դէթ լինել երջանիկ իշ-
խան : Սե՛ծ հանգստութիւն չնորհեց
նա իւր հպատակաց . ժողովրդեան
մէջ տիրած վերջին աստիճանի ասպ-
կանութիւնն սխաւ նուազիլ . այս
հանդարտութիւնը շնորհաբար իր-
նախաճուրհակս :

Թ

Օգոստոս գիտցաւ լաւ ՚ի կիր արկանել
ժամանակն . սա այն անձն է, որ բազ-
դին պատրաստածներն քաղեց և հա-
ւարեց . սա միշտ բարերապաշտութեան
հետամուտեցաւ, բայց չկարաց միշտ
իւրացնել զայն :

Տիրերիս, յայտ յանդիման ասա-
տիկ անարգեց մարդիկներն : Աորա ա-
ղատ համարած զգացումն այն եղաւ,
որոյ մէջ ինքն խկ պարտաւորեցաւ
թաքչիլ . բայց այս գողցես ուրախու-
թեան աղաղակ մ' էր, զոր չկարաց
նա թարուցանել, թէ և ժողովուրդն
ու ծերակոյոր իւր սրտին բնական ե-
ղող վատթարութեան մէջ ընկղմած
էր :

Երբ սոյն արքայական ժողովուրդն
խոնարհելով Ալուսին առջեւ, սխաւ
մեծարել զայն, իմացուեցաւ որ իւր
նորա տուած պատիւն զբուշութեամբ
և չտիով էր : Հռովմ սիրեց զԱլուսն,
բայց սորա մահուանէն երկար ժամա-
նակ յետոյ իւր ուրուականն գողցես
ահ և սարսափ կ'ազդէր սոյն յուսոյ
և ուրախութեան երկրին վերայ : Ահա
այստեղ կանգ պէտք է առնուլ, հը-
ռովմեական բարուց նկարագիրն զի-
տելու համար : Այս բարուց հիմն
նչ Տիտոս, ոչ Անտոնիոս և ոչ Մար-
կոս - Աւրելիոս կարացին փոխիւնել,
աս միմիայն Աստուծոյ գործ էր : -

Հռովմեական ժողովրդի բարուց
ապականութիւնն այլ եւս վերջին աս-
տիճանի հասած էր, այնպէս որ կա-
րելի չէ մարդոյ մը անկից աւելի վատ
թարանալ՝ եթէ արդէն սրտի ներքին
պակասութիւն մը չունենայ : Այսու-
կանեալն Աթէնք երբէք չընողկացաւ .
գերութեան շղթաներուն մէջ ան-
գամ նորա խորհած ու որնածն էր
միմիայն զուարճութիւն : Այնպէս կը
կարծէր նա, որ իւր յաղթականներն
զինքն կողոպտած չլին բնաւ : վրան

զի նորա իրեն թողած էին Մի-գիտ
տաճարն, այսինքն գրահանութիւնն ու
գեղարուեստները :

Հռովմ առաքինութիւն համա-
րած էր բնութեան դէմ եղած ցած
և անարդ գործքերն : Պրիւթոս Ա.
խողխողեց իւր սրդէքն, և Պրիւթոս
Բ. ՚ի մահ մատնեց իւր հայրն : Այն
ժամանակի պարագայից ստիպումէն
յառաջ եկած առաքինութիւններ,
որք ընդհանուր առաքինութեանց
հետ գիւրաւ կը շփոթին, բայց պէտք
է դիտնալ որ այսպիսիք տեղական սու-
վորութեանց արդիւնքներ են : Թէ-
պէտ ազատն Հռովմ յառաջագոյն սա-
կաւապետ էր և ժուժկալ, այլ սակայն
ասոր առիթ եղած էր իւր խեղճու-
թիւնն ու աղքատութիւնը. քաջա-
սիրտ էր նա, վասն զի իւր օրէնքնե-
րն կը ստիպէին զէնք տռնուլ այլոց
դէմ, մանաւանդ թէ ինքն յառաջ
եկած էր հուղիւհար և պատերազ-
մասէր անձերէ : Մակայն նա այնու-
հետեւ հարարտ, անխուս, ագահ և
չու այտաբարոյ եղաւ. նա իւր բաղ-
դէն դստ ուրիշ գեղեցիկութիւն չու-
նեցաւ, իւր բարուց ընթացքն ա-
տելի էր ամենուն :

Տասն հրամանատարները ստքի
տակ առին զնա : Մարիտ ըստ հա-
ճոյից՝ ազնուականաց, խի Սիլբան հա-
սարակ ժողովրդեան արիւններն կը
հասեցնեն, և ՚ի ըլումն անարդանաց
սոյն վերջինը հրապարակաւ կը ջնջէ
տաճարապետին : Ատախլինայի դաւա-
ձաններն յանձնառու կը լինին իւ-
րեանց հարազատ հայրերն սարսնելու
և խողմը կը համարին իրենց տապա-
լել Հռովմայ մեծափառութիւնը, զոր
Յուզուրթիան կը ցանկար գնով առ-
նել : Ըստ կը դան եռապետներն հե-
տերինն ունենալով իրենց հարստա-
հարութեան սգին : Օլտաստո հրա-

ման կը տայ հօր և սրդւոյ՝ զիրար ըս-
պանանել, և նորա գողցես)անյատաղ
հրամանը կը կատարեն : Օերակոյն
արհամարհելի կը լինի նոյն խի Տիբե-
րիտին պատճառաւ : Աերոն՝ իրբեւ
Ըստուած տաճարներ (կ'ունենայ :
Ըւանց՝ առաջնակարգ համարուած
ազնուականաց բնտանիքներէն յառաջ
եկած քսուներու վերայ խօսելու, ա-
ռանց զիրար ամբաստանող և սատա-
կող նենգապետները մատնանիչ առ-
նելու, առանց՝ Աերոնի լիտութեանց
մասնակցող բարոյախօս փիլիսոփանե-
րն ՚ի տես բերելու, օրինակի հա-
մար, Սենակիան՝ որ կը ջանայ մայրա-
պան Աերոնը ջատագովել և Պիւռոս,
որ առ երեսու կը դռնէ զայն, այլ ՚ի
ճածուկ կողքայ նորա սոյն գործողու-
թեան ձեռնամուխ լինելն. վերջապէս
առանց որոնելու կարգիս, Վիթել-
լիտի, Տոմիթիէնի և կոմոտի իշխա-
նութեանց ներքեւ սոյն վատութեանց
արձանագրերն, որք հարիւրաւոր ան-
գամ վերընթերցուած և զարմանաց ա-
ռիթ տուած են, նկարագիր մի միայն
բաւական է մեզ՝ Հռովմեական բա-
րուց ապականութե աստիճանն յայտ
յանգիման ցուցանելու : Պրոտիէն՝
Սեւերոսի պաշտօնատարն, իւր դուս-
տրը կայսեր անգրանիկ սրգւոյն հետ
ամուսնացնելով, հարիւր ազատ շը-
ռովմայեցիներ ներքինացոյց, յորոց ո-
մանք ընտանեաց տէր և հայր էին.
« Արպէս զի, կ'ասէ պատմագիրն,
իւր դուստրն բազմութիւ ներքիններ
ունենայ իւր ետեւէն՝ ինչպէս վայել
է արեւելեան թագուհւոց մը » :

Ահա այս աստիճան վատթարու-
թեան վերայ պէտք է յաւելուլ միան-
գամայն և յոյժ եղճեալ բարոյակա-
նութիւն : Սեւարոյ Աստուր՝ իւր
ներկայութեամբ Փղըրայ շատուծոյն
լիտի հանդեսներն կը պատուէր : Սա

իւր Մարիա ամուսինն յղի տեսներով
 (Օրժանսիոսին թողուց զայն . բայց
 սակաւ ժամանակէն յետոյ երբ (Օր-
 ժանսիոս վախճանելով Մարիա ժա-
 ոսանդ եղաւ անոր բոլոր հարստու-
 թեանց, վերստին Աստուծո ամուսնացաւ
 նորա հետ Ի փնաս) Օրժանսիոսի որ-
 դւոյն : Արիւստոն արձակեց իւր Թա-
 բանթիա տիկինն , որպէս զի իր սա-
 նուհւոյն Միւսկիային հետ ամուսնա-
 նայ : Մենեկայ մեզ կը ներկայացնէ , որ
 կային այնպիսի կանայք , որք իւրեանց
 աարիքն փոխանակ հիւպատոսաց թը-
 ւով հծշուելու . իրենց արանց թուռ
 վըն կը հաշուէին (1) : Տիբերիոս հնա-
 րեց Scellarii և Spintrice . Աերսն ազա-
 տագրեալ Պիւթագորոսին հետ հրա-
 պարսպարահաւ խայտառակութիւն
 գործեց , և Հիլիոկապլըն իւր հար-
 սանեաց հանդեսներն Հիերօքլէսով
 շքեղացոյց (2) :

Այս քանիցս յիշուած Աերոնն էր
 դարձեալ , որ հաստատեց երիտասարդաց
 (Juvénale) հանդեսներն (3) : Ասպետ-
 ներն , ծերակոյտի անդամներն և առա-
 ջին դասու կանայք պարտաւորուած
 էին ելանել թատրոնի ատեսանն և լըկ-
 աի երգեր երգելով՝ այսնակատակ
 գուսաններու նման խաղեր յօրինել :
 Ի պատիւ թիմէլէնի տրուած ինձն-
 յից համար յատկապէս շէնքեր հիւմ-
 նուած էին Ագրիպպա լճակի ավանց
 վրայ , ուր Հուովմէական երեւելիք
 դէմ առ դէմ կը նստէին՝ բոլորովին
 մերկայեալ լիտի կանանց հետ : Իսկ

(1) Հռոմէացեաց մեջ ստորութիւն կար տա-
 ըին անգամ մի Հիւպատոս փոխել . այս խորով
 հեղինակն կ'ազէ հասկացնել , որ կանայք ամեն
 տարի իրենց այրերն կը փոխէին :

(2) Հիերօքլէս Յոյն գիրի մ' էր :

(3) Այս հանդեսներն կը կատարուէին փետր-
 վոր ամսոյն մեջ . իբրև բարեկենդանի դիմակառ-
 բաց հանդէսներ , որոց միայն երիտասարդներն կը
 մասնակցէին :

գիշեր ասուն յատուկ լուսաւորու-
 թիւններ կրնէին , որպէս զի շուայա-
 կան գործքերն ու անառակութիւնե-
 րը յայտնի տեսնուին :

Մահն եւս սոյն հինօրեայ դասա-
 նաց մի գլխաւոր թատրոն կը կազմէր :
 Մահը , որ մի կողմէն իւր ստիւգումնե-
 լով տխրութիւն կ'առթէր ոմանց ,
 կը ներկայանար անդ սոյն կենսական
 զուարճութեանց առաւելութիւն մը
 տալու համար : Ինձոյից աւելի սրայ-
 ծառութիւն տալու համար , բերել
 կը սոյնի սուսերաձիգ ըմբիշներ և ա-
 նառակ կիներ փողահարներով չըջա-
 պատուած . այս պղծալից թատերէն
 զինի կ'երթային հանդիսատես լինել
 կատաղի գազանի մը մարդկոյնի ա-
 բիւն խմելուն , և անկէց վերջն ալ կը
 ներկանային մի ուրիշ թատեր , ուր
 հանդիսականաց զուարճութեանց հա-
 մար կատարուած խաղն էր՝ հողեվոր
 մարդկանց կենաց վերջին վայրկեանն
 ըրած սարսուելի շարժումներն ու որբ-
 տաշարժ թաւալումներն : Ինչպիսի
 ժողովուրդ , որ մարդկոյնի ճիւղնդն
 ու մահն անգամ նախատանաց կեն-
 թարկէ և բնութեան երկու մեծամեծ
 խորհուրդներն թէատրոնի ատեսանն
 կը հանէ , որպէս զի միանգամէն նա
 խառէ Աստուծոյ ամեն գործերն :

Արիւստոն դերիներն հանապաղ
 շղթայ կը կրէին օտքերինն , և իրենց
 ապրուստի համար արուած ճաշելիքն
 էին սակաւ ինչ հաց , ջուր և աղ :
 Իսկ գիշեր ժամանակ կ'արդելուէին
 ստորերկրեայ մասանի մը մէջ , որ մի
 միայն կամարին վերայ եղած փոքրիկ
 ծակէ մը օդ կ'առնէր : Հուովմէական
 թատերաց համար յատկապէս պահ-
 պանուող Ափրիկեցի առիւծուց վնա-
 սերն կամ սպանանելը յատուկ օրէն-
 քով մը արդիւրուած էր : Այլմէ գեղա-
 յի մը իւր կեանքն ազատելու համար

յանդ գներ մարառել սոյն կենդանեաց միոյն գէմ, խտրել պատժոց կենթարկուէր : Ա՛րքապէս վոյրենու թիւնն այն աստիճանի հասած էր, որ եթէ մէկը ճամբու վրայ յովազէ մը պատառուելով կամ եղջերուի մը եղջիւրներու վրէ վիրաւորուելով՝ մեռնէր, իսկոյն դանազան հիւանդներ վրան հասնելով անոր արիւնով կը լուացուէին և ան յագօրէն կը խմէին անկէ : Ասիւգուլան կը մտայթէր, որ Հոռովմէական ժողովուրդն մի և եթ գլուխ ունենար, սրտէս ղե կարենար մէկ հարուածով դամենքն ՚ի մահ մատնել : Սոյն այս կայսրն՝ կրկիտի խաղուց համար պահուած առիւծներն մարդոց մտով կը կերակրէր : Այրն սկսած էր մինչև անգամ կենդանի մարդկանց մարմիններն կերցընել : Ազիպատացիի մը, որ իւր դիշակերութեամբ ու օրկրամարութեամբն իրատանուանի եղած էր : Տիտոս՝ իւր Ա՛ես պատխանոս հօր տօնախմբութիւնն փառաւորելու համար, երեք հազար հըրէանէր գազաններու լափել առաւ : Երբ Տիրերիտոս կը յորդօրէին որ գէթ ալ մահուան վճիռ տայ իւր բարեկամներէն միոյն, զոր բռնտերու մէջ գրեթէ բոլորովին մաշեցուցած էր. «Այս տախալին հաշտուած չեմ նորա հետ», պատասխանեց սոյն բըռնակալն, այնպիսի խօսքով մի. որ իսկապէս կը յայտնէ Հոռովմէական ոգին — :

Վրեթէ հասարակ բան մի եղած էր նոցա մէջ ստանանել մի անդամէն հինգ, վեց, տասը և մինչեւ քօան հասար հօգի ամեն կարգէ, ամեն ազգէ և ամեն հասակէ, որք բաւական էր թէ կատարաւոր լինէին կառավարութեան առջեւ. իսկ այս զհուածներու ազգականներն՝ իրենց տուները տերեւազարդ ճիւղերով զարդարելով, կոոց ձեռքերն կը համբու-

րէին և այսպէս սոյն հանդիսից ներկայ կը լինէին : Ա՛յժանի իննամեայ դուստրն որ չէր կամէր կատարել այս սու վորութիւնը, կը հարցանէր թէ՛ արդեօք զինքն պիտի հարուածէ՞ն երբ բանտ տանին. նախ ըկեցաւ դահլիճէն և ապա նորա ձեռքով սպանուեցաւ : Ա՛հա այսքան էր Հոռովմայեցւոց իրենց կրօնից տուած մեծարանքն : Արտի իշխանութեան ժամանակ (Տակիտոս կը ներկայացնէ զայս իբրեւ մի գեղեցիկ թատր) Պուսէն լճակի ափանց վերայ 19 հազար հոգի մենամարտելով զիրար սպանեցին Հոռովմէական ժողովուրդեան զուարճութեան ու զբօսանացը համար. կուռեւէն յառաջ մարտիկներն ողջունեցին զկայսրն ասելով «Այոյս, մահուան մերձ մարդիկ զքեզ կ'ողջունեն» . խօսք մը, արդարեւ այնչափ մեղի, որչափ ազու :

(Շարունակէի :)

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՍՏՈՒԱՅԱԲԱՆ
ՆՈՒԹԻՒՆ

Բարեմասնութիւններէ և դեղեցիկ յատկութիւններէ զուրկ անձինք ընդհանրապէս իրենց մէջ չարանախանձ ուրի մը կը սնուցանեն. ուստի երբ կը տեսնեն իրենցմէ աւելի արդիւնաւոր և օգտակար անդամներ մարդկութե, կը սկսին անարդ միջոյններով հալածել և թկամ յուսահատեցնելու աշխատիլ և նոցա բարի սնունը կամ համբաւը աղարատելու ջանալ : Այս օրինակ վատասիրտ անձինք ՚ի սկզբանէ անտի մեր Ազգին մէջ անպակաս եղած են և կարելի է տեսլ, որ մեր՝ ուրիշ ազգաց նկատմամբ յետ մնալուն ամենամեծ պատճառներուն մին ևւս այս է :